ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

ՄԱՆՎԵԼ ԶՈՒԼԱՅԱՆ, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, «Հայաստան», 1995, 192 էջ։

Շուրջ քառորդ դար է անցել արդի թուրքական պատմագրության մեջ հայոց պատմության հարցերի լուսաբանմանը նվիրված պրոֆ. Մ. Կ. Զուլալյանի ուսումնասիրության հրատարակումից[1]։ Բոլոր հիմքերը կային հուսալու, որ խնդիրը սպառված է և երկին անդամ դրան անդրադառնալը մեր օրերի առաջատար պատմաբաններից մեկի համար ժամանակի չարդարացված վատնում կլիներ։ Դիտության ասպարեզում, հասկապես պատմագիտության մեջ, մարտնչող տգիտության դիրքերից հանդես եկող կեղծարարների պակաս չի զգացվում ոչ միայն Թուրքիայում, այլև աշխարհի ցանկացած երկրում, սակայն Թուրքիայում դա ունի մի այլ երանգավորում ևս՝ դիտակցարար, միտումնավոր կեղծարարությունը։ Առավել ևս, որ Հայկական լեռնաշխարհի և Մերձավոր ու Միջին Արևելքի հետահայաց թյուրքացման ծրագիրը հատուկ ձեռնարկում էր ստացել դեռ Թուրքական Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալի կողմից 1930-ական թթ.[2]։ «Նպատակն արդարացնում է միջոցները» դրծելակերպով առաջնորդվող և հիմնականում պատմագիտական-լեզվաբանական մեթոդաբանությանը չտիրապետող կամ դիտակցարար անտեսող տասնյակ հեղինակներ «վարուցանքը» էին կատարում հինարևելյան քաղաքակրթության բնօրրանում՝ Մերձավոր Արևելքում, տարված դեռ հին քարեդարից այստեղ Թուրքեր փնտրելու մոլուցքով։ Թվում էր, թե ժամանակը պիտի հանդարտեցներ նման հակագիտական արշավները, մանավանդ որ նոպատերպյան տարիներին հարյուրավոր Թուրք երիտասարդներ ուսանելու մեկնեցին Եվրոպայի և ԱՄՆ-ի համալսարաններ, և այսօր Թուրքիայում հումանիտար դիտությունների բնագավառում օտար ափերին կրթություն ստացած բարձրորակ մասնագետները մեծ թիվ են կազմում։ Սակայն, այնուամենայնիվ, Առաջավոր Ասիայի հնագույն և հին պատմության ոլորաններում «թյուրքաորոնման» միտումը այսօր էլ շարունակվում է։ Իհարկե, դա արվում է զգալիորեն բոզարկված եղանակով, դիտականության շղարշի ներքո։ ԵԹԼ նախկինում, մինչև 1950—60-ական թթ. այսօրինակ «ստեղծագործությունները» հիմնականում ուղղված էին սովիական բնակչության «լուսավորմանը», ապա ավելի ուշ սկիզբ առավ մի նոր միտում, որի նպատակն է Թուրքերի՝ իրենց այսօրվա հայրենիքում ի սկզբանե բնակման դրույթին միջազգային լսարանին հաղորդակից դարձնելը։ 1970—80-ական թթ. Անկարայում, Ստամբուլում և արտասահմանում սկսեցին լույս տեսնել պատկերազարդ հրատարակություններ նվիրված լեզուներով։ Այսպիսով, «թյուրքաորոնման խնդիրը» սկսեց աստիճանաբար միջազգայնանալ։ Թուրքիայում և արտասահմանում պետական հովանավորությամբ պարբերաբար կազմակերպվում են միջազգային դիտաժողովներ, ցուցահանդեսներ և սեմինարներ, նվիրված Թուրքիայի տարածքի հնագույն քաղաքակրթություններին։ Նման միջոցառումների ընթացքում հաջողությամբ անց է կացվում ժառանգականության դաղափարը, այն է՝ Փոքր Ասիայի և «Արևելյան Անատոլիայի» հնագույն ժողովուրդները՝ խեթերը, լուվիացիները, խուրրիները, ուրարտացիները և այլք ծագումով Թուրքեր չեն եղել, սակայն նրանց ներկայիս մարդաբանական և մշակութային միակ ժառանգները Թուրքերն են (լավագույն դեպքում հույների միջնորդավորմամբ)։

Այսպիսով, Մ. Կ. Զուլալյանի նոր ուսումնասիրության հրատարակությունը խիստ կա-

---

[1] М. К. Зулалян. Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970.

[2] Cumhuriyetin 50 Yilinda Turk Tarih kurumu. Ankara, 1973, s 38,

[3] Այսօրվա Թուրքիայի տարածքում գոյություն ունեցած հնագույն և հին քաղաքակրթությունների թյուրքացման միտումը բացակայում է եվրոպական կրթություն ստացած Թուրք մասնագետների միջին և նոր սերնդի աշխատություններում (է. Բիլգիչ, Ս. Ալփ, Ե. Ակուրդալ, Ա. Ունալ, Ա. Դինչոլ)։

բեռոր է Թուրքական պատմագրության մեջ վերջին տասնամյակներում գերիշխող միջազգայնացման միտումների տեսանկյունից։

Թուրք պատմագրության հաջողությունները հաճախ պայմանավորված են ոչ այնքան դրված խնդիրների պատշաճ գիտական լուծմամբ, որքան զանգվածայնությամբ և բազմալեզու բնույթով։ Այս գրոհին Հայաստանի և Սփյուռքի պատմագրությունը հակադրում է միայն առանձին հարցերի առնչությամբ գրված հոդվածներ, ճնշող մասը՝ հայերեն՝ Հայաստանի դիտական և պարբերական մամուլում։ Գրախոսվող դիրքը հայ պատմագրության մեջ իր տեսակում անհրաժեշտ աշխատություն է, որտեղ հանգամանորեն ներկայացված է Թուրքական պատմագրության կեղծարար գործունեությունը իր ողջ ընթացքով՝ սկզբնավորման պահից մինչև օրս։ Մ. Կ. Ջուլալյանի աշխատությունը ունի հստակ գիտական կառուցվածք, դուրկ անհարկի շեղումներից։ Թուրք պատմաբանների առանցքագաղափարներից ու տեսակետներից կատարված ընդարձակ շեղումները թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմելու ինչպես դրանց քաղաքական ուղղվածության, այնպես էլ գիտականության բացակայության մասին։ Աշխատությունը խնդրին առնչվող բազմաթիվ տեսակետների պարզունակ շարադրանք չէ, այլ դրանց հատուկ խմբավորումն ըստ հումանիտար գիտությունների բոլոր ուղղությունների՝ պատմություն, լեզվաբանություն, հնագիտություն, ազգագրություն, մարդաբանություն և այլն։ Ներկայացնելով Թուրք հետազոտողների հիմնազուրկ «տրամաբանական» կառույցները, հեղինակը դրանց հակադրում է միջազգային գիտության մեջ արմատացած և կասկած չհարուցող հիմնարար դրույթներ։ Մասնավորապես, հարկ է նշել Շ. Գյունալթայի և Ա. Ինանի «Թուրք բրախիցեֆալների (կարճագլուխների)» և Միջին Ասիայից դեռ էնեոլիթում դեպի առաջավոր Ասիա կատարած էթնիկական տեղաշարժի մասին տեսության քննադատությունը (էջ 10—15)։

Հնագույն և հին շրջանի պատմության ժամանակահատվածում հայոց պատմությունը անմիջականորեն չի աղերսվել Թուրք ժողովրդի պատմությանը և վերոբերյալ հարցադրումները հայոց պատմության հետ միայն միջնորդավորված, տեսական ու շինծու համադրումներ են և, աղերսվելով ընդհանուր պատմության հարցերին, հանդիպում են նաև այլազգի գիտնականների դիմադրությանն ու քննադատությանը։ Հայոց պատմությունը ուշ միջնադարում առավել մեծ չափով միահյուսվել է Թուրք ժողովրդի պատմության հետ, պատմական նույն իրադարձությունը երկու ժողովուրդների համար էլ ունեցել է վճռորոշ նշանակություն՝ միանշանակ և կամ տրամագծորեն հակադիր արժեվորումով։ Թուրք պատմաբանների կողմից միջնադարյան Հայաստանի պատմության խեղաթյուրումները, սակայն, միշտ չէ, որ արժանի հակահարված են ստանում նաև օտարազգի գիտնականների կողմից։

Թուրք-պարսկական պատերազմները չի կարելի ասել, թե բարօրություն էին պատերազմող կողմերի ժողովուրդների համար, սակայն այն, որ դրանք մեծագույն աղետ դարձան հայ ժողովրդի ճակատագրում և մեծ չափով ազդեցին նրա պատմական զարգացման ընթացքի վրա, այդ արդեն անառարկելի փաստ է։ Արձանագրելով 1639 թ. Թուրք-պարսկական հաշտությունը, Հակոբ Կարնեցին նշում է. «Խաղաղութիւն աստուծոյ նախախնամութեամբն եղև. և այսպէս, որ աղատեցաւ աղգս հայոց ի երկուց կողմանց, զի այն կողմի բնակիչը երկրին ամենայնք հայք էին և են, և յայս կողմս ամենայն հայոց աղգէն էին. [թէև] յոյներ և տաճիկ բազում, զի Մուստաֆայ վէզիրն այն ողորմութեամբն աստուծոյ և խաղաղացոյց ընդ միմեանս, և բարի անուն ժառանգեաց...»4։

Գրախոսվող աշխատության մեջ հեղինակը ցույց է տալիս, որ ի տարբերություն միջնադարի Թուրք հեղինակների իրաղեկության պակասի, ժամանակակից Թուրք պատմաբանների կողմից հայոց պատմության աղավաղումը ոչ թե պատահական թյուրիմացություններ կամ չգիտության հետևանք է, այլ խորապես մտածված և նպատակասլաց բաղաքականության արդյունք։ Այսպես, եթե XVII դարի Թուրք նշանավոր հեղինակ Քյաթիբ Չելեբին դրում է Հայաստանի մասին՝ թվարկելով նաև Հայաստանի քաղաքները (Պարտավ, Բայլական, Խլաթ և այլն), ապա ժամանակակից Թուրք պատմագրությունը աշխատում է խուսափել ոչ միայն Հայաստան անվանումը օգտագործելուց, այն փոխարինելով «Արևելյան Անատոլիա» անվանումով, այլև պնդում է, թե Օսմանյան կայսրությունում հայերը ապրել են միայն բարօրության մեջ։

Պատմության մեջ պաճառահետևանքային կապի դիտակցումը Թուրք պատմագրությունը օգտագործում է յուրովի։ Հիմնավորելու համար հետևանքի խեղաթյուրումը, նրանք փորձում են կեղծել նաև պատճառները։ Հայ ժողովրդի XIX—XX դդ. ազատագրական պայքարը դրսից ներմուծված, «խռովարարների» կազմակերպած

---

4 Մաղր ժամանակագրություններ. XIII—XVIII դարերս, կազմեց Վ. Հակոբյան. հ. 2, Երևան, 1956, էջ 565։

իրադարձություններ ներկայացնելը հիմնավորելու համար փորձում են պնդել, թե հայերը ոչ մի հիմք չունեին դիմելու ազատագրական պայքարի։ Ինչո՞ւ։ Որովհետև նրանք ավելի լավ էին ապրում, քան թուրքերը, հայերը չէին ենթարկվում հնշումների և այլն։ Մ. Զուլալյանը բազմաթիվ փաստերով ապացուցում է այդ տեսության հիմնագուրկ լինելը, ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը ենթարկվում էր կեղեքման ու հարստահարման, և հիմնականում այդ կեղեքումից ազատվելու նպատակով էր կամ արտագաղթում իր հայրենիքից, որպես փրկվելու միակ միջոց և կամ ընդունում մահմեդականություն։ Ցուցադրելու համար, որ օսմանյան պետության հնշումները ուղղակիորեն տարածվում էին հայ ժողովրդի բոլոր իրավերի վրա, աշխատության մեջ բերվում է Դրիդորիս Աղթամարցու դիպուկ ձևակերպումը. «Հազարացիք օրինօք թիւր. դպրդս խանձեն որպէս դհուր» (էջ 117)։ Աղթամարցու վկայությամբ որպես հավաստում Մ. Զուլալյանը բերում է նաև թուրք պատմագիր Ի. Փեչևու հաղորդումը, թե թուրքական բանակը, ներխուժելով Հայաստան, «հարստությունները, որոնք հնարավոր չէր տանել, բոլորն այրեցին», (էջ 118)։ Հեղինակը բազմաթիվ փաստեր է բերում Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը ներկայացնելու համար այնտեղ Օսմանյան տիրակալության ողջ ժամանակաշրջանի ընդգրկումով և ցույց տալիս, թե ոչնչով չէր բարելավվում քրիստոնյաների դրությունը, շարունակվում էին անընդմեջ անօրինականությունները, կրոնական ու տնտեսական, բազարական ու սոցիալական հնշումները։ Մ. Զուլալյանը վկայակոչում է Ահմեդ Չելեբի հաղորդումը Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի մասին, որը լիովին համընկնում է հայ աղբյուրների հաղորդումներին, և այս եզրակացնում, թե «շատ բնական էր, որ հայ ժողովուրդը իր հայացքը սևեռեր դեպի հյուսիս՝ Ռուսաստան, որը հանդես էր գալիս թուրքիայի կողմից ընկճված, ստրկացված ժողովուրդների ազատարարի դերում» (էջ 144)։

Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե ի տարբերություն այլևայլ բացատրությունների, «իրականության մեջ, սակայն, հայերի, վրացիների Ռուսաստանից օգնության հայցելը բխում էր այդ ժողովուրդների ծանր կացությունից ստարերկրյա դաժան տիրապետությունից» (էջ 145)։ Մի շարք փաստերով հիմնավորելով այդ դրությունը, հեղինակը եզրակացնում է, թե թուրք հեղինակների «առաջ բաշած այն թեզը, թե Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների մոտ ազատագրական շարժման սկզբնավորումը բացառապես պայմանավորված էր Ռուսաստանի գավթողական քաղաքականությամբ, գիտականորեն հիմնագուրկ է ու կոչված է արդարացնելու քրիստոնյա հպատակների ինքնարուխ ազատագրական շարժումների դաժան ճնշումը թուրք ավտատերերի կողմից» (էջ 149)։

Մ. Զուլալյանը հերքում է թուրք հեղինակների պնդումները ոչ միայն հայկական ու թուրքական սկզբնաղբյուրների վկայություններով, այլև եվրոպացի և թուրք հեղինակների կողմից հրապարակված օսմանյան շրջանի վավերագրերի հաղորդումներով՝ դրանով իսկ կքրկին ընդգծելով, որ թուրք հեղինակների տեսակետները թուրք-հայկական հարաբերությունների և Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ վարվող քաղաքականության մասին ակնհայտորեն միտումնավոր են և բրոնագրոսիկ։ Ուշադրավ է վերջերս հիմնավորող մեկ դուգադրություն եպ. հայտնի փաստ է, որ 1548 թ. հայոց Ստեփաննոս Սալմաստեցի կաթողիկոսը ճանապարհվեց Եվրոպա՝ ազատագրական պայքարի համար եվրոպական երկրների օժանդակությունը փնտրելու նպատակով։ Մ. Զուլալյանը մեջ է բերում թուրքական սուլթան Սուլեյմանի նույն թվականին Ֆրանսիայի թագավորին գրած հատուկ գրությունից մի հատված, որտեղ սուլթանը ծանուցում էր իր հաղթանակը պարսիկների դեմ պատերազմում, և իրեն ներկայացնում որպես հպատակների շահերի արտահայտիչ։ Հեղինակը միանգամայն արդարացի նկատում է, որ չի կարելի հավատ ընծայել նման «փաստերին» և ըստ այդմ՝ Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը ներկայացնել իդեալական։ Մ. Զուլալյանը մեջ է բերում հայկական ձեռագրերի հիշատակարաններից հատվածներ, որտեղ նույն թվականների համար միանգամայն հակառակ պատկերն է ուրվագծվում (էջ 117—118)։

Գրախոսվող աշխատության մեջ թեև հպանցիկ, սակայն այնուամենայնիվ ընդգծվում է այն գաղափարը, որ գոյություն ունի թուրքական ու ազգրեղջանական պատմագրությունների առկա մեթոդների ու շահագրգռությունների միջև։ Թուրք և ազգրեղջանական պատմագրության մեջ Հայաստանի հին և միջնադարյան պատմության խեղաթյուրումը ծառայում է հայկական եղեռնի ժխտման նպատակին։ Օրի-

---

3 Ի դեպ, թուրքական պատմագրության՝ հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան շրջանի հարցերը կեղծելու միտումը հաջողությամբ որդեղրած ազգրեղջանական պատմագրության գործելակերպը արձանագրվել է հենց վերջինիս աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկի՝ Ի. Այլիևի կողմից (И. Г. Алиев.

նաչափ հայտարարելով Թուրքիայի պայքարը անկախության համար, Թուրք պատմագրությունը միաժամանակ մերժում է անկախության համար հայ ժողովրդի պայքարի իրավունքը։ Այդ նպատակով է, որ հարցականի տակ է դրվում Հայաստանի գոյությունը, հայերը հայտարարվում են եկվորներ՝ ցրված Թուրքիայի տարածքում, իսկ պատմական Հայաստանի գրավոր ու նյութական մշակույթի հուշարձանները վերագրվում են Թուրքերին, հորինվում են «քրիստոնյա Թուրքերի» տեսություններ[6] և այլն։ Այս ամենը նկատի ունենալով Մ. Զուլալյանը հատուկ ընդգծում է, թե «ցուրաքանչյուր ժողովրդի սրբազան իրավունքն է ապրել ազատության և անկախության մեջ» (էջ 152)։

Հայ պատմագրությունը երբեք հարցականի տակ չի դրել Թուրքիայի անկախության իրավունքը, սակայն միաժամանակ և մերժել է հայ կամ Թուրքիայի կողմից ստրկացված այլ ժողովուրդների ազատության հաշվին Թուրքերի կողմից այն իրագործելու եղանակը։

Պատմության ճշմարիտ ուսումնասիրությունը պատմական անհրաժեշտություն է, անթույլատրելի է նույն քաղաքի, երկրամասի, պատմական նույն իրադարձությունների նկարագրությունը միայն ընտրվի փաստերի միակողմանի լուսաբանման հիման վրա։ Ուստի կարելի է հույս հայտնել, որ երբևէ հայ և Թուրք պատմաբանները հնարավորություն կստանան համագործակցելու և երկու երկրների պատմական արխիվների հետազոտության հիման վրա ստեղծելու նոր աշխատություններ այն տարածքի և հարցերի առավել խոր ուսումնասիրմամբ, որտեղ խաչաձևվում է երկու ժողովուրդների պատմությունը։

Ինչպես Արևմտյան Հայաստանի պատմությանը նվիրված Մ. Զուլալյանի նախորդ մեծարժեք մենագրությունները, ներկա աշխատությունը ևս կարևոր ներդրում է հայ պատմագիտության մեջ և այն գեռևս երկար ժամանակ կպահպանի իր գիտական արժեքն ու քաղաքական հրատապությունը։ Ցանկալի է, անշուշտ, ակադ. Մ. Զուլալյանի գրախոսվող մեծարժեք աշխատությունը ունենալ Թուրքերեն ու նաև Եվրոպական լեզուներով։

Պ. Ա. ՁՈՐԱՆՅԱՆ, Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Изучение проблем древней истории, филологии и археологии в Азербайджане в 1977—1987 гг.—Вестник древней истории, 1988, № 1, с. 56—78.

[6] Mehmet Eröz, Hiristiyanlaşan turkler, Ankara, 1993; Aygil Yakup. Hristiyan türkler'in kisa tarihi. Istanbul, 1995.